Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. օգոստոսի 31-ի N 154 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՍԲ. ՀԱԿՈԲ» ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից 2011 թվականին հիմնանորոգված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի Վարդենիս համայնքի «Սբ. Հակոբ» եկեղեցու ճանապարհի բարեկարգում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ինտելեկտուալ ռենեսանս» հիմնադրամ (Երևան, Արաբկիր 21-րդ փող., 10-րդ շենք, բն. 8, ՀՎՀՀ՝ 00130483)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, Վարդենիս համայնք Հոգևոր բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	80,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ եկեղեցի տանող ճանապարհի վերանորոգում, հենապատերի կառուցում - 01.08.2018 թ. - 30.11.2018 թ.՝ 80,000,000 դրամ:

10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական աշխատանքների իրականացում՝ 80,000,000 դրամ: Կապալի պայմանագիր Պ-11/08 «Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ, 01.08.2018 թ.:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենիսի համայնքապետարան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ